«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից ծրագրային ազդագրի հիման վրա մեկ տարվա ընթացքում անժամկետ պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմս) թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման հիմնական պայմանները	
Թողարկող և տեղաբաշխող	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Պարտատոմսերի արժույթը	**ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար**
Թողարկման ընդհանուր ծավալը	**Առավելագույնը՝** • **20 000 000 000 (քսան միլիարդ) ՀՀ դրամ** • **50 000 000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար**
Յուրաքանչյուր թողարկման ծավալը	**Ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս**
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	• **100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ** • **100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար**
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	**Պարտատոմսերը անժամկետ են**
Պարտատոմսերի վաղաժամ մարման/ հետգնման դեպքերը	Բանկի նախաձեռնությամբ պարտատոմսերը կարող են վաղաժամ մարվել/հետ գնվել, եթե պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ. ա) պարտատոմսերը վաղաժամ մարելու/հետ գնելու նպատակով Բանկը դիմել և ստացել է ՀՀ ԿԲ նախնական համաձայնությունը, բ)պարտատոմսի վաղաժամ մարման/հետգնման ամսաթվի և Պարտատոմսերի տեղաբաշխման մեկնարկի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի, բացառությամբ, երբ տեղի են ունեցել հարկային օրենսդրության կամ կարգավորման այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում միջոցները կարող էին չներգրավվել կամ չբավարարել առաջին մակարդակի լրացուցիչ

	կապիտալի հաշվարկում ընդգրկվելու պայմաններին և Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով բանկը միջոցների ներգրավման պահին չէր կարող կանխատեսել փոփոխությունը, գ) Բանկը վաղաժամկետ մարումներ իրականացնելու սպասումներ չի ձևավորել: Յուրաքանչյուր տրանշի շրջանակներում թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի վաղաժամ մարումն/հետգնումն իրականացվում է պարտատոմսերի անվանական արժեքով և ամբողջ ծավալով՝ առանց մասնակի մարումների կիրառման: Պարտատոմսերի վաղաժամ մարման/հետգնման իրականացման օրը սահմանվում է պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրերին համապատասխան: ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի վաղաժամ մարման/հետգնման դիմաց վճարումները կատարվելու են ըստ թողարկման արժույթի: Պարտատոմսերը Բանկի կողմից կարող են վաղաժամ մարվել/հետ գնվել նաև այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով դրանք չեն համապատասխանում Կանոնակարգ 2-ի Հավելված 9-ի պահանջներին:
Պարտատոմսերի դուրսգրման կամ մարման դեպքերը	**Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում՝** Պարտատոմսերը ենթակա են **դուրսգրման** կամ **մարման**: **Դուրսգրման դեպքում** Պարտատոմսերը դուրս են գրվում անվանական արժեքով, որի արդյունքում Ազդագրով սահմանված Պարտատոմսերից բխող բոլոր իրավունքները (Բանկի

	պարտավորությունները ներդրողների նկատմամբ) դադարում են: **Մարման դեպքում** մարված գումարն անհապաղ ուղղվում է Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով (**Փոխարկման դեպք**): Բանկի կողմից Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի դուրսգրումն ու փոխարկումն իրականացվում են ներդրողներին պատկանող պարտատոմսերի համամասնությամբ և ընդհանուր այն գումարի չափով, որը ՀՀ ԿԲ կարծիքով, անհրաժեշտ է Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավել, քան անժամկետ պարտատոմսերի անվանական արժեքն է: Պարտատոմսերի միևնույն տրանշի համար չեն կարող կիրառվել Դուրսգրման և Փոխարկման տարբերակները միաժամանակ: Փոխարկման դեպքում անժամկետ պարտատոմսերը փոխարկվում են սովորական բաժնետոմսերի փոխարկման գործակցով, որը հաշվարկվում է հետևյալ կերպ. **Փոխարկման Գործակից = Մեկ Պարտատոմսի Անվանական Արժեք/ Սովորական Բաժնետոմսի Միջին Կշռված Գին** **Սովորական Բաժնետոմսի Միջին Կշռված Գինը՝** - փոխարկման օրվան նախորդող կիսամյակի ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում Բանկի սովորական բաժնետոմսերով երկկողմանի անընդհատ աճուրդի ժամանակ կնքված գործարքների միջին կշռված գին:

	ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսի անվանական արժեքը փոխարկվում է ՀՀ դրամի՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ կողմից փոխարկման օրվա համար հայտարարված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Սույն կետի իմաստով **Ֆինանսական վիճակի վատթարացում է** համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը: **ա)** Բանկի առաջին մակարդակի հիմնական կապիտալի համարժեքությունը չի գերազանցում 7.061% սահմանաչափը, **բ)** ՀՀ ԿԲ-ն գրավոր կերպով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ ՀՀ ԿԲ կողմից հաշվարկված գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից, **գ)** ՀՀ ԿԲ գրավոր եղանակով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ առանց ՀՀ ԿԲ կամ պետական այլ օժանդակության Բանկի մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը:
Տարեկան արժեկտրոնային դրույքը	***Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով***, մասնավորապես. 1. Պարտատոմսերի Շրջանառության առաջին 60 ամիսների ընթացքում կկիրառվի տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը

	Ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս, սակայն այն կսահմանվի. • ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **15.00%** • ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **10.00%:** **2.** Պարտատոմսերի Շրջանառության առաջին **60 ամիսների** ավարտից հետո անժամկետ պարտատոմսերի համար կկիրառվի տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես. ՀՀ դրամով թողարկվող Պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարումը եկամտաբերությանը (yield to maturity) գումարելով Բանկի գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույք (spread), որը կսահմանվի **2%-8%-ի** սահմաններում Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար: ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ Ապահովված Օվերնայթ Ֆինանսավորման Տոկոսադրույքի (SOFR: Secured Overnight Financing Rate) 180-օրյա միջինացված բազիսային մեծությանը գումարելով Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույք (spread), որը կսահմանվի **2%-8%-ի** սահմաններում Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

	Սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսները:
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	**Կիսամյակային**
Արժեկտրոնների չվճարման դեպքեր	Արժեկտրոնի եկամուտները ամբողջությամբ կամ մասամբ ենթակա չի լինելու վճարման, եթե դա կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի կամ ՀՀ ԿԲ խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգի» համաձայն սահմանված համախմբված շեմի խախտմանը կամ Բանկի կապիտալի կազմում չներառված պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը: Ընդ որում՝ • Արժեկտրոնային վճարումները լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում, • Պարտատոմսերի գծով վճարումների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում Բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում, • Բանկի և պարտատոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար արժեկտրոնային վճարումների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում:

Արժեկտրոնների հաշվարկման օրը	**Ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս**
Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբ	**Ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս**
Պարտատոմսերի մարման օրը	**Անժամկետ են:** Ներդրված գումարը կարելի է հետ ստանալ միայն Պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու միջոցով, ինչպես նաև Բանկի նախաձեռնությամբ վաղաժամ մարման դեպքում:
Պարտատոմսերի քանակը	**Առավելագույնը՝** • **200 000 (երկու հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում** • **500 000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում**
Մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումները	**Ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս, սակայն.** • ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ ոչ պակաս քան 25 (քսանհինգ) և ոչ ավել քան **25 000** (քսասնհինգ հազար) հատ • ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ ոչ պակաս քան **50** (հիսուն) և ոչ ավել քան **50 000** (հիսուն հազար) հատ
Նախապատվության Իրավունք	**Պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան**
Փոխարկման կարգով պայմանավորված սովորական բաժնետոմսերի նախապատվության իրավունքի կիրառում	**Կիրառելի չէ**
Պարտատոմսերի տեսակը	**Անվանական արժեկտրոնային, անժամկետ պարտատոմսեր**

Պարտատոմսերի ձևը	**Ոչ փաստաթղթային**
Պարտատոմսերի փոխարկելիությունը	**Նախատեսված է փոխարկման կարգ**
Արժեկտրոնի արժույթը	**ՀՀ դրամ /ԱՄՆ դոլար**
Պարտատոմսերի ապահովվածությունը	**Չապահովված**
Պարտատոմսերի շրջանառության ձևը	**Ազատ շրջանառության իրավունքով**
Կարգավորվող շուկայում պարտատոմսերի ցուցակումը	Պարտատոմսերը ենթակա են ցուցակման պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում: Հայաստանի ֆոնդային բորսայի հետ կկնքվի պայմանագիր Պարտատոմսերի ցուցակման վերաբերյալ:
Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն	Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն նախատեսված է:
Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը	Պարտատոմսերը ենթակա են տեղաբաշխման բաց բաժանորդագրության ձևով: